

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

«Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2011 թվականին» վիճակագրական ժողովածուն ընդգրկում է հանրապետության 2011թ. արտաքին առևտրի վերաբերյալ տվյալները: Ժողովածուի նյութերի հիմքում ընկած են ՀՀ մաքսային վիճակագրության և վիճակագրական դիտարկումների տվյալները:

Ժողովածուի մեջ բերվում են.

- արտահանման և ներմուծման ծավալները (բնափրային և արժեքային արտահայտությամբ) ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (ԱՏԳԱԱ) բաժինների և խմբերի, ըստ առանձին երկրների, ամփոփ՝ ԱՊՀ երկրներով, արտաքին աշխարհի և Եվրոպական միության (ԵՄ) երկրներով,
- արտահանման և ներմուծման ծավալներն ըստ ապրանքների ծածկագրման և նկարագրման «Միջազգային առևտրի ստանդարտ դասակարգման» երկնիշ մակարդակի,
- արտահանման և ներմուծման ծավալներն ըստ ապրանքների ծածկագրման և նկարագրման «Լայն տնտեսական կատեգորիաների» դասակարգման:

Արտահանման ծավալներում ընդգրկված են ինչպես հայրենական արտադրության, այնպես էլ վերաարտահանված արտասահմանյան արտադրության ապրանքները, իսկ ներմուծման ծավալներում՝ արտասահմանյան արտադրության ապրանքները, որոնք ներկրվել են հանրապետություն՝ ներսում սպառման և վերաարտահանման համար:

Արտահանման և ներմուծման ծավալներում ընդգրկված չեն արժեթղթերը, շրջանառության մեջ գտնվող թղթադրամները և մետաղադրամները, դրամական ոսկին, հանրապետության տարածքով օտարերկրյա բեռների տարանցիկ փոխադրումները, ցուցահանդեսների և տոնավաճառների համար ուղարկված կամ ներկրված ապրանքները:

Արտահանման ծավալները հաշվարկված են ՖՕԲ գներով, իսկ ներմուծմանը՝ ՄԻՖ-ով (ներառյալ ապահովագրությունը և տրանսպորտային ծախսերը՝ մինչև ներմուծող երկրի տարածք):

Արտահանման և ներմուծման արժեքային ցուցանիշների հաշվարկի համար, ազգային դրամի վերահաշվարկումն ԱՄՆ դոլարով կատարվել է համաձայն ՀՀ կենտրոնական բանկի ամենօրյա պաշտոնական փոխարժեքի:

I n t r o d u c t i o n

“Foreign Trade of the Republic of Armenia for 2011” statistical handbook covers data on foreign trade of the republic for 2011. The handbook materials are based on the RA customs statistics and statistical observation data.

The handbook covers:

- export/import volumes (in kind and value) in accordance with chapters and groups of the Commodity Nomenclature of External Economic Activity /CNEEA/, by separate countries (by country of origin), in aggregated form – by CIS countries, the rest world and European Union /EU/ countries;
- export/import volumes in accordance with the Standard International Trade Classification /SITC/ two-digit level of commodity coding and description;
- export/import volumes in accordance with Broad Economic Categories /BEC/ of commodity coding and description.

Export volumes include both the commodities of domestic production and the re-exported goods of foreign production while import volumes include foreign production goods that have been imported into the republic for consumption and re-export.

Export/import volumes do not include securities, paper and coined money in circulation, monetary gold, transit transportation of foreign goods through the territory of the republic, commodities sent or imported for exhibitions and fairs.

Export volumes are calculated in F.O.B. prices, and import volumes - in C.I.F. (including insurance and freight to the border of the importing country).

For calculation of export/import value indicators, the national currency is recalculated into US Dollars according to the everyday official exchange rate of the RA Central Bank.

